Երկրորդ Ամենափրկիչ խաչարձանը Մամիկոնեանց իշխանութեան մէջ գտնուում է Մարց գիւղից դէպի արևելա–հարաւ հինգ կիլոմետրի չափ հեռաւորութեան վերայ, այժմ «Ճգնաւորի Թալայ» կոչուած գիւղացիներից։ Այստեղ մի փոքրիկ հարթութեան վերայ, անտառի բացատում, մեծ ու փոքր խաչքարերի մի խումբ կայ, երկուսը 1231 և 1245 թուականներով, նրանց մէջ և 1285 թուից Ամենափրկիչ կոչուած խաչը՝ նման Դսեղի յուշարձանին։

Խաչի բարձրութիւնն է պատուանդանով մօտաւորապէս 3,50 մետր (բուն խաչքարը 1,62 × 0,95 մ., վերին պատուանդանի բարձրութիւնը 0,53, լայնքը 1,29 մետր, գորնէզաւոր պատուանդանը 1,33 մ. բարձր և 1,55 մ. լայնքը), յետևը այսպիսի արձանագրութեամբ (պոպէ. 42).

1. + Ի թվս ՉԼԴ (= 1285).
2. Կանգնեցաւ խաչս (s!) ի նեղ եւ ի դա
3. ն ժամանակս թագաւորութե՛
4. Դեմետրի որդոյ Դաւթի ի հայրապետութե՛ ան
5. ՅՀանիսի թոռն Դաւիթն։ Ես Թոմա քահանա
6. եւ եղբայր իմ Տիրացու կանգնեցաք զամենափրկ(ի)
7. չ յիշատակ հաւր մերս Գրիգորի քահանայի եւ մաւր մեր . .
(կոպրած երկու տող)
8. յԹիւն Բանուշահի։ եւ քվերաց մերոց Տիրանց . .
(դ կամ երկու տող կոպրած)
9. եւ ? Տիրամարին։ եւ Տիկնանցին։ եւ Տիրոցին եւ փեսա . .
(ից կոպրած)
10. . . (մե կոպրած) ան պատճառ քահանայից Խայչատրս (s!) եւ . . (կոպրած)
11. եւ Մարգարին։ Ով ասայսերք որք երկրպագէք
12. . . (զմե կոպրած) զուցելքս յիշեցէք ի քն (1)։

(1) Երկրորդ տողում առաջին բառի ց-ի մէջ աւ գրած։ Նոյն տողում երկրորդ բառի ա-ն չ-ի բոլորակի մէջ. վեցերորդ տողի վերջին վանկի ա-ն ց-ի բոլորակի մէջ. նոյն տողի վերջին բառի առաջին վանկի գ-ի բոլորակի մէջ ամ գրուած։ Ընդգծուածները կցուումներով։ Ամբողջ արձանագրութեան մեծութիւնը 1,62 × 0,92 մ., տողի մէջ գրի բարձրութիւնը 7 սմ.։

Մարցի Ամենափրկիչը (պոպէ. 43) շատ է նման Դսեղին, զուցէ և հէնց նոյն Վահրամ արուեստաւորի գործը, միայն համեմատաբար աւելի լայն է և կարճ։ Ճակատի վերին մասը ջարդուած է, ուստի և դժուար է ասել, չկա՞ր արդեօք Ամենակալը, որ Դսեղում կայ, թէ ոչնչացած է. բայց մնացած մասերի նմանութիւնը ակներև է։ Խաչի ցուցանակի վերայ միայն երկրորդ տողն է կարդացուում, առաջինը ջարդուած է և մի փոքր մասը միայն նկատելի «. . . . /աւ որ հրէից». ցուցանակի տակից երևում է «աջ ոն», պատկերը և ելնդաւոր գրերը, իսկ դորա տակը «հոգի ոյ» աղաւնակերպ պատկերով։ Ցուցանակի երկու կողմից իրենց սովորական տեղերում, արեգակը ճառագայթաւոր սկաւառակի մէջ առասպելական թռչունի մէջքին, մօտը բարձրաքանդակ «Ա.», իսկ միւս կողմը լուսինը ցլանման, մէջքը զարդարուն լաթով ծածկուած կենդանու վերայ, կողքին «Լ» գրած։ Այստեղ ևս խաչափայտի վերին և հորիզոնական թեւերի ծայրերը խաչաձեւ վերջացած։ Խաչեցեալը թէև գլուխը թեքել է դէպի աջ, բայց չի նայում մօրը, որ բռնել է որդու խաչից պոկուած թևը և համբուրում է։

Յովհաննէս, Նիկոդիմոս և Յովսէփ նոյն գիրքն ունին, ինչպէս և Դսեղում. կըրկնուում է մինչև իսկ Յովհաննու կոչկի սրաքիթ ձևը։ Միայն Յովսէփի թևի վերայ ձգուած է «կտաւ», որ չի նկատուում միւսների վերայ. բայց այստեղ էլ պակասում է «ձեռք, որ զերկինս արարին» ևն. մակագրութիւնը։ Յովսէփ գլուխը վեր է բարձրացրել և երգում է «աջ ոն», խոշոր և դուրս ընկած տառերով գրուած բերանի մօտից, ինչպէս և Մամիկոնի խաչարձանի վերայ, արմաւենիկի զարդերի և ցողունների մէջ խառն։ Գողգոթայի բլուրը այստեղ ևս ձեւաւորած հինգ կամարներով, ինչպէս և Դսեղում, մէջտեղի կամարի տակ Ադամի գլուխը, ընդհանուր ձևակերպութեամբ նման և՛ Մամիկոնի խաչարձանին, միայն այնտեղ եօթ կիսակամարով՝ տարաձութեան մեծ լինելու պատճառով։ Խաչքարի դաչտը ծածկուած է արմաւենիկների և ցողունների սիրուն քանդակներով, երեքի մէջ էլ մօտաւոր նմանութեամբ։ Բայց նրանց մեծ և առանձնայատուկ նմանու-